

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ» ՍՏԵՂԾՍԱԼ
ԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Ձաքարյանների իշխանապետության շրջանին նախորդած թուրք-սելջուկյան տիրապետությունը Հայաստանում քայքայել էր ոչ միայն տնտեսությունը, այլև՝ անգործության կարգավիճակ էր ստեղծել հայ կանոնական և աշխարհիկ օրենքների համար, մանավանդ վերջինի, որն այդպես էլ, մինչև Մխիթար Գոշը, գոյություն չի ունեցել առանձին ժողովածուի տեսքով: Այդ հաստատում են հայ իրավունքի պատմությամբ և մասնավորապես Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» ուսումնասիրությամբ զբաղված հայ հեղինակները: Այսպես՝ Խաչիկ Սամվելյանը գրում է. «պատմական տվյալներն և մանավանդ Մխիթար Գոշի վկայությունը Մեծ Հայքի նկատմամբ և Ներսես Լամբրոնեցու հիշատակարանը Կիլիկյան հայ թագավորության վերաբերմամբ հաստատում են, վոր մինչև XII դարը գոյություն չի ունեցել ազգային օրենսգիրք, հայկական կողմից: Միակը՝ կանոնական իրավունքն էր, վորը կարելի չե ասել, կողիֆիկացիայի յեր յենթարկվել VIII դարում (Հովհան Օծնեցի կաթողիկոսի կողմից - Գ. Ա.) ու գործում էր իբրև գրի առնված, վորոշ համադրությամբ կազմված որենսգիրք, բայց սա էլ իր իրավաբանական բովանդակությամբ սերտորեն կապված էր հիերոկրատիայի իրավասության, յեկեղեցական ֆեոդալականության հետ:

Միայն XII դարումն է սկիզբ առնում և իրականանում ազգային օրենսգիրք հորինելու ձգտումը»¹:

Հիմնվելով Մ. Գոշի և Ներսես Լամբրոնացու տեսակետների վրա՝ Խ. Թորոսյանը հետևյալն է գրում. «Օտարազգիները պարսավում են հայերին, որ նրանք չունեն դատաստանագիրք, հայերը զգում են Դատաստանագրքի պակասը ...», և քիչ անց՝ «...ԺԲ դարի վերջին դատաստանագիրք ունենալու կարիքը Հայաստանում խիստ հասունացել էր»²:

Խորամիտ ուսումնասիրություններ և վերլուծություններ կատարելուց հետո Վ. Բաստամյանը հետևյալ եզրակացությանն է հանգում. «Մինչև Մխի-

¹ Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմությունը, հատոր 1, Յերեվան, 1939, էջ 73-74:

² Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Երևան, 1975, էջ ԺԴ-ԺԵ:

թար Գօշը չկար հայոց մեջ որևիցե աշխարհական օրենսգիրք կամ դատաստանագիրք, նույնչափ դժուարին է հաստատել գոնեա այժմ, թե կար»³:

Մեր ընդգծած նախադասությունից, այսպիսով, եզրակացությունը մեկն է՝ հայկական վերջնականապես ձևավորված օրենսգիրք մինչև Մխիթար Գոշը գոյություն չի ունեցել: Իրավական առումով բացը հայոց մեջ կասկածից զերծ էր: Ապացուցելու համար այս, նույն Բաստամյանը մի հետաքրքիր դիտարկում է կատարում, որը մի ավելորդ անգամ ապացուցում է, որ հայոց պետականությունները գործող օրենսգիրք ստեղծելու և դրանով առաջնորդվելու խնդիրը մղել են երկրորդական, երրորդական պլան: «Եվ թեպետ Կիլիկիայի նախարարները, - գրում է նա, - չունեին ոչ այն իշխանությունը և ոչ այն իրաւունքները և քաղաքական հզօր դրութիւնը, ինչ որ ունէին Յայաստանի հին նախարարները Բագրատունեաց և Արշակունեաց ժամանակ, և նախարարական իրավունքը գրեթե բոլորովին անհետացած լինելով՝ պետական վարչութիւնը եւ գերագոյն իշխանութիւնը պիտի կարիք ունենար և հարկաւորութիւն զգար հանել նոր օրենքներ և յօրինել մի ընդհանուր օրենսգիրք և դատաստանագիրք ամբողջ թագավորութիւնը կառավարելու համար, բայց նա չկատարեց այդ, այլ բաւականացավ վարել իւր ներքին գործերը (ժողովրդի իրավաբանական սովորութիւն սերով, Մխիթար Գօշի համառօտացրած Դատաստանագրքով և օտար պետութիւններից, օրինակ Անտիոքից վերցրած և հայերեն թարգմանած օրենքներով, արտաքին առևտրական գործերի համար - առանձին դաշնագրութիւններով Եւրոպական տէրութիւնների կամ վաճառականական ընկերութիւնների հետ, իսկ ընդհանուր պետական գործերի համար - արքայական հրովարտականերով: Եւ թէ յիշուի Ռութինեանց պետութիւնը չունէր իւր սեփական օրենսգիրք և դատաստանագիրք, ահա դորա ապացոյցը»⁴:

Վ. Բաստամյանցի հետ լիարժեքորեն կարելի է համաձայնվել. Կիլիկիայի հայկական թագավորությունը, որը զարգացած ավատատիրական պետություն էր, նույնպես չունէր իր հիմնական օրենսգիրքը, որը պետության ամրապնդման ամենակարևոր գործոններից մեկն էր, և այն հանգամանքը, որ այնտեղ որպես հայկական ծագում ունեցող օրենսգիրք օգտագործվել է միայն Մխիթար Գոշի «Դատաստանագրքի»: Սմբատ Գունդստաբլի ստեղծած համառոտ տարբերակը, դարձյալ վկայում է, որ մինչև այդ «Դատաստանագիրքը», հայկական օրենսգիրք գոյություն չի ունեցել: Հակառակ դեպքում Կիլիկիայում կօգտվեին նաև դրանից:

³ Մխիթար Գոշի Դատաստանագիրք Յայոց, էջ 52:

⁴ Նույն տեղում, էջ 53:

Հարկավ, այս ամենը չպետք է մղի այն եզրակացությանը, որ Հայաստանը դարեր ի վեր եղել է ամօրեն երկիր և կառավարվել է ըստ պատեհության: Ըստ երևույթին արքունի հրովարտականերով ձևավորվել է նախարարական իրավունքը, կանոնական իրավունքը նպաստել է հասարակական կյանքի այս կամ այն կերպ կարգավորմանը, իր մեջ պարունակել է քաղաքացիական իրավունքի տարրեր: Բայց ամբողջական օրենսդրական ժողովածու, այդպես էլ մինչև Մ. Գոշը գոյություն չի ունեցել:

Բացի արքաների և նախարարների ու վերջիններիս տնտեսական կամ հարկային կախվածության մեջ գտնվողների հարաբերությունները կարգավորող օրենքներից, որոնք, անշուշտ, եղել են հրովարտականների տեսքով, հայտնի չէ:

ա) Արքան ի՞նքն էր մշակում օրենքները և հրովարտականները, թե՞ դրա համար գոյություն ուներ առանձին մարմին:

բ) Նրա հրովարտականները ընդհանուր էին, ունեին Հաստատում օրենքների նշանակություն, թե՞ տեղական կամ մասնակի նշանակություն:

գ) Քրեական և քաղաքացիական գործերը արդյո՞ք միևնույն դատավորներն էին քննում:

դ) Ի՞նչ օրենքներով էր կարգավորվում հասարակական կյանքը, կա՞յին օրենքներ ամուսինների գույքային հարաբերությունների, գրավադրման, վարձակալության, անշարժ գույքի գնման և այլնի մասին:

ե) Գոյություն ունե՞ր արդյոք դատական վճիռները բողոքարկելու իրավունք, և եթե այո, ո՞ւմ՝ թագավորին, թե մեկ այլ անձի:

զ) Ինչպիսի՞ պատիժներ էին նախատեսվում քրեական տարբեր հանցագործությունների նկատմամբ և այլն:

Հայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոն դառնալուց հետո, շատ չանցած, հայ եկեղեցին աստիճանաբար իր վրա է վերցնում օրենսդրական գործառույթներ: Ընկնելով պետական գաղափարախոսության հիմքում՝ այդ գաղափարախոսության պաշտպանությունը համահունչ է դառնում պետականության պահպանմանը: Եվ պատահական չէ, որ իրավական նախաձեռնությունն այնուհետև անցնում է եկեղեցուն: Բայց եկեղեցին իր հրավիրած եկեղեցական ժողովներում (354 թ. Աշտիշատի, 447 թ. Շահապիվանի, 648 և 719 թ. Դվինի), որին մասնակցում էին իշխանները և նույնիսկ արքան (Աշտիշատի ժողովին)՝ ընդունում էր հասարակական կյանքի այս կամ այն ոլորտը կարգավորելու միտված կանոններ, որոնք այդպես էլ ընդհանուր ժողովածուի տեսք չունեցան մինչև 8-րդ դարը: Իսկ Հ. Օծնեցու «Կանոնագիրը Հայոցը»

չի կարելի ընկալել որպես իրավահարաբերությունները համակողմանիորեն կարգավորող ժողովածու:

Քանի որ, ըստ քրիստոնեական ուսմունքի, գերագույն դատավորը Աստվածն էր, ուստի Աստվածաշուկն էր դառնում հիմնական «օրենսգիրքը», որի դրույթներից շեղվելը համարվում էր անմեղելի հանցանք: Բայց այդ հանցանքի դեմ հիմնական պատիժն ապաշխարանքն էր: Իսկ սա նշանակում է, որ քրեական գործերով դատավարությունը նույնպես անցնում էր եկեղեցուն:

Սակայն, պետք է խոստովանել որ թե Աստվածաշուկն էր, թե եկեղեցական կանոնները երբեք չէին կարող կատարել հիմնական օրենսգրքի այն դերը, որը պահանջում էր պետության գոյությունը: Պետականորեն այս ընթերցման պակասն այն հետևանքն ունեցավ, որ մինչև Մխիթար Գոշը աշխարհիկ իրավունքը կանոնական իրավունքի նկատմամբ հետընթաց ապրեց: Եվ եթե նրա որոշ նորմեր մինչև այդ պահպանվեցին, ապա՝ դրանք եղան քաղվածքներ օտար օրենսդրություններից և իրավունքից:

Դրանք էին.

ա) Մովսիսական օրենքները: Այս օրենքները, որոնք ներառում էին հրեական ժողովրդի գործող իրավական նորմերը, բավական ազդեցիկ դերակատարություն ունեին «Արևելքի, մասնավորապես Առաջավոր Ասիայի ժողովուրդների իրավական կյանքում ու իրավահայեցողության զարգացման մեջ, մասնավոր՝ քրիստոնեության առաջին դարերում»⁵:

Մովսիսական օրենքները հիմնականում վերաբերում էին հրեա ժողովրդի սոցիալ-տնտեսական հարաբերություններին և հիմնականում իրենցից ներկայացնում էին պատգամներ, խրատներ ու կանոններ: Դրանք, ըստ հրեաների, աստվածային օրենքներ են, որոնք առաջին անգամ գրի էր առել Մովսես Մարգարեն: Կարծում ենք, որ Մովսիսական օրենքների՝ հատկապես սոցիալ-տնտեսական ոլորտին վերաբերող մասը չէր կարող չլիարաջվել հայ աշխարհիկ խավի կողմից, մասնավոր, որ քրիստոնեության մուտքը համընկավ ավատատիրական հարաբերությունների ձևավորմանը: Մովսիսական օրենքները սկզբնական շրջանում քաղված էին Յին կտակարանից, բայց դրանք հետագայում ենթարկվում են վերամշակման, որի արդյունքում ծնվում են «Երուսաղեմի Թալմուդը» (368 թ.) և Բաբելոնում ու Միջագետքում գործող «Բաբելոնի Թալմուդը»: Թալմուդյան իրավունքը հետագայում իր արտահայտությունն է գտնում նաև Դուրանում և նրա օրենքներում՝ Շարիաթում:

⁵ Խ. Սամուելյան, Ուշվ. աշխ., էջ 54:

Մովսիսական օրենքների առանձին դրույթների կիրառումը Հայաստանում ամենևին այն ենթադրության տեղիք չպետք է տա, որ դրանք այնտեղ գործել են սովորության իրավունքի համադրումով ստեղծված հատուկ օրենսգրքի անսքով: Խոսքը կարող է վերաբերել միայն դրանց որոշակի օգտագործմանը: Այդ օրենքներից, բնականաբար, օգտվել է նաև Գոշը:

Որ «Թալմուդական» իրավունքը նույնպես մուտք է գործել Հայաստան, փորձել է ապացուցել հայտնի հրեաբան Յ. Կարտսը իր ուսումնասիրության մեջ⁶:

Նա, ինչպես նաև հրեաբաններ Յ. Կոխլերը, Դ. Մյալլերը և Վ. Ապտովիցերը այդ եզրակացությանն են հանգել՝ համեմատելով Մ. Գոշի «Դատաստանագրքի» որոշ հոդվածներ «Թալմուդի» իրավաբանական նորմերի հետ: Ըստ երևույթին՝ Մ. Գոշն օգտվել է այդ օրենքների առանձին հոդվածների հայերեն թարգմանությունից, որոնք, անշուշտ, հայ հասարակական կյանք են ներմուծվել Արշակունյաց պետականության անկումից բավական հետո, ըստ երևույթին՝ 7-8-րդ դարերում, երբ հայերն ընկնում են արաբական գերիշխանության տակ: Բայց սա ամենևին չի ենթադրում, որ Հայաստանում գոյություն են ունեցել Մովսիսական օրենքների ժողովածուներ, ինչպես գտնում է Խ. Սամվելյանը: Հնարավոր է, որ գոյություն են ունեցել այդ օրենքներից պարզապես քաղվածքներ: Եթե արաբներն իրենց տիրապետության շրջանում օգտագործել են «Թալմուդյան» օրենքները, ապա իրենց տիրապետության տակ գտնվող ազգերին, բնականաբար, պետք է պարտադրեին դրանք: Իսկ քանի որ դատական համակարգը նրանց ձեռքում էր, կարիքը չկար դրանք թարգմանելու և հայերին տրամադրելու:

Այնպես որ՝ խոսքը կարող է վերաբերել Մովսիսական օրենքների առանձին դրույթներից հայերի կողմից հետագայում թերևս օգտվելուն և ոչ թե դրանցից ժողովածուներ կազմելուն: Մանավանդ, որ իսլամի ի հայտ գալուց հետո «թալմուդյան» օրենքները մտան Դուրանի մեջ: Ուստի և, հարց է առաջանում՝ ինչպես կարող էր քրիստոնյա ազգը օգտվել մահմեդական օրենքներից:

Եզրակացությունը մեկն է՝ Մովսիսական և Թալմուդյան օրենքները Հայաստանում գոյություն չեն ունեցել ժողովածուների տեսքով, և մինչև Գոշը օրենսգրքի գոյության մասին խոսք չինել չի կարող:

բ) Հռոմեական օրենքներ: Հռոմեական օրենքների ներկալումը հայ հասարակական - քաղաքական կյանք վստահորեն կարելի է պնդել, որ սկսվել է

⁶ I. Karst, Grundriss der Geschichte des Armenischen Rechts "Zeitschr. F. vergleichende Rechts Wissenschaft" B. XIX. 1906, Stuttgart, էջ 328.

Հուստինիանոս I կայսեր կառավարման շրջանից (527-565 թթ.): Խ. Սամվելյանն այն տեսակետն է արտահայտում, որ հին հռոմեական իրավունքը Հայաստանի իրավական հարաբերություններում զգալի դեր է սկսել խաղալ Հայաստանի 387 թ. առաջին բաժանումից և մասնավորապես 428 թվականից հետո, երբ անկում ապրեց Արշակունյաց արքայատոհմը⁷:

Սակայն այս պարագայում դժվար է նրա հետ համաձայնվել՝ հետևյալ պատճառներով: 389 թվականին Պապի Արշակ որդու մահից հետո Արևմտյան Հայաստանը վերածվում է հռոմեական պրովինցիայի: Նա ենթարկվում է վարչական փոփոխությունների: Ստեղծվում են երեք վարչական միավորներ, ա) Մեծ Հայք (Armenia Magna) կամ Ներքին Հայք (Armenia Interior), Պաղատուն, Մեծուր Դարանաղի, Եկեղյաց, Աղիվն, Մաթանաղի, Դերջան, Կարին, Շաղագոմ և Ապեր գավառները⁸: Պրո-կոպիոս Կեսարացին վկայում է, որ Մեծ Հայքում «հռոմեացիների կայսրը Հայոց իշխան էր նշանակում, երբ որ ցանկանար և ում որ ցանկանար: Այդ իշխանին անվանում էին, ինչպես և այժմ, Հայաստանի կոմես»⁹:

բ) Սատրապական Հայաստան կամ ինքնավար իշխանություններ: Այս վարչատարածքի մեջ մտնում էին Մեծ Հայքի հարավ-արևմտյան մասը և հայկական վեց նախարարություններ՝ Անձիտ, Անգեղտուն, Հաշտնյանք, Մեծ Ծոփք, Փոքր Ծոփք կամ Ծոփք Շահունյաց և Բալախուլիտ¹⁰:

գ) Փոքր Հայք. սա ընդգրկում էր Կապադոկիային սահմանակից Անդրեփրատյան մարզը, բաղկացած էր երկու պրովինցիաներից՝ Առաջին և Երկրորդ Հայքերից՝ Սեբաստի և Մելիտենե կենտրոններով:

Մինչև Հուստինիանոսի ռեֆորմները, այս երեք վարչատարածքներում էլ հայ նախարարները շարունակում էին պահպանել իրենց կալվածքների ժառանգական սեփականության իրավունքը: Ճշմարիտ է՝ նրանք դեռևս մինչև Հուստինիանոսը կորցնում են կոմեսի կամ սատրապի պաշտոնում նշանակվելու ժառանգական իրավունքը, բայց շարունակում էին պահպանել ներքին կառավարման իրենց իրավունքը: Նրանց կախյալությունը կայսրությունից սահմանափակվում էր զինվորական պարտականություններով և հարկերի ու նվերների մուծումներով: Այս ամենից ինչ հետևություն. *հռոմեական իրավունքը մինչև 6-րդ դարի առաջին կեսը դեռևս չէր թափանցել հայ հասարակական կյանք*: Սա

⁷ Տե՛ս Խ. Սամվելյան, նշվ. աշխ., էջ 63:

⁸ Տե՛ս М. Адонц, Армения в эпоху Юстиниана, ЛПБ, 1908, էջ 46:

⁹ Տե՛ս «Պրոկոպիոս Կեսարացի», թարգմանությունը ընագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Ջրաջ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 196:

¹⁰ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Խ. II, Երևան, 1984, էջ 219:

ականա հաստատում է նույն խ. Սամվելյանը՝ գրելով, թե «տեղական յերկբային իրավական ինստիտուտները, բնիկ սովորութական իրավունքը շարունակում էին տակավին տիրապետել հասարակական-իրավական հարաբերություններում, ու հայ նախարարներն իրենց ձեռքում կենտրոնացրած ունեին վարչական ու իրավական-դատական ֆունկցիաներ: Այս իրավական դրությունը շատ քիչ փոփոխություններով տևում է մինչև Յուստինիանոս կայսրի թագավորումը (527-565 թթ.)»¹¹:

Եզրակացությունը մեկն է՝ հռոմեական իրավունքը Յայաստանում չի գործել և հայ աշխարհիկ իրավունքի բացը երբեք նրանով չի լրացվել, նույնիսկ Յուստինիանոսի ռեֆորմներից հետո էլ: Եվ սա այն պարզ պատճառով, որ Յուստինիանոս կայսեր ռեֆորմներն ավելի շատ նպատակ էին հետապնդում հայ նախարարներին զրկել զորք պահելու և իրենց կալվածքների ժառանգական սեփականության իրավունքից, քան թե հռոմեական օրենքները ներմուծել հայ հասարակական կենցաղ: Պատահական չէ, որ նա 528 թ. առաջին նովելայով, որը կոչվում էր «Imp. Iustinianus A zetae viro illustri magistro militum ner Armenian et Pontum Polemonianiacum et gentes», վերացնում էր հայ իշխանների զինվորական և վարչական իրավունքները՝ նրանց ենթարկելով մագիստրոսին: 536 թ. նովելայով Յուստինիանոսը Յայաստանը ենթարկում էր նոր վարչատերիտորիալ բաժանման՝ ստեղծելով I, II, III և IV Յայքերը: Յայ նախարարներին ժառանգական իրավունքից զրկելուն էր նպատակաուղղված նույն թվականի մյուս նովելան: Այն կոչվում էր՝ «De armeniis, ul et illiper omnie Romanorum leges sequanten» («Յայքերի մասին, որ նրանք այսուհետև ամեն բանում ղեկավարեն հռոմեական օրենքներով»): Այս օրենքով կայսրը կանանց ու տղամարդկանց հավասար ժառանգական իրավունք էր տալիս, որի հետևանքով մասնատվում էին հայ նախարարների ժառանգական կալվածքները՝ թուլացնելով նրանց և զրկելով ապստամբելու հնարավորությունը: Սա էր Յուստինիանոսի հիմնական նպատակը՝ միտված հայ ժողովրդին ավելի շատ վերջնականապես ծուլելուն, իսկ մինչև այդ անհնար էր հայ ժողովրդին ամբողջովին ներքաշելը հռոմեական օրենսդրական դաշտ: Այնքանով, որքանով հայության մի մասը գտնվում էր հռոմեական տիրապետության տակ, անհնար էր ամբողջովին զերծ մնալ այդ պետության օրենսդրական ազդեցությունից: Մեր խորին համոզմամբ, հայությունը մինչև վերջ հռոմեական հիմնական օրենքներին վերաբերվել է որպես իր ներքին կյանքը կազմակերպելու համար անհարիր նորմեր, ուստի և շարունակել է առաջնորդվել իր հին սովորույթներով և կրոնա-

¹¹ Նույն տեղում, էջ 64:

կան իրավունքով: Այնպես որ՝ հռոմեական իրավունքը չի ունեցել ընդգծված ազդեցություն հայոց հասարակական հարաբերությունների վրա, և Բյուզանդական տիրապետության շրջանում էլ հայ ժողովուրդը չի ունեցել այդ օրենքների ազդեցությամբ ձևավորված օրենքներ՝ ժողովածուի տեսքով:

Հռոմեական օրենքների պարտադրանքը կրում էր ժամանակավոր բնույթ:

Ինչպես համոզվում ենք՝ հռոմեական, ապա՝ բյուզանդական (476 թ. հետո) տիրապետության շրջանում էլ գոյություն չի ունեցել թեկուզ և որոշակի օտար ազդեցությամբ (որը ցանկացած օրենսգրքի համար անխուսափելի է) օրենքների ժողովածու:

Խ. Սամվելյանն իր աշխատության մեջ խոսում է նաև այսպես կոչված «Ասորա-հռոմեական դատաստանագրքի» մասին՝ և, հենվելով Յ. Կարստի ենթադրության վրա, գտնում է, որ Բագրատունյաց շրջանում այն թարգմանվել է հայերեն¹²:

Սակայն դա սոսկ տեսակետ է, և եթե այդպիսի դատաստանագիրք գոյություն էլ ունեցած լինի, անհնար է վերջնականապես ճշտել՝ թարգմանվել է այն հայերեն, թե ոչ: Կարծում ենք, որ ավելի շատ՝ ոչ, քանզի հակառակ դեպքում անհնար է, որ դրանցից տեղյակ չլինեն Մ. Գոշը, ով, ինչպես կհամոզվենք, հիշատակում է իրավունքի՝ կողմից իր օգտագործված աղբյուրների մասին:

Նենք չենք ուզում խոսել կանոնական իրավունքի աղբյուրների մասին ավելին, քան դրանց անդրադարձանք, քանզի միանշանակորեն պարզ է, որ դրանք անպայմանորեն օգտագործվել են Մ. Գոշի կողմից: Սակայն «Կանոնագիրք Հայոցը» երբեք չի հավակնել և չէր էլ կարող հավակնել դառնալու միջնադարյան հայ գործող օրենսգիրք:

Նույնը կարելի է պնդել Դավիթ Ալավկաորդու (11-12-րդ դդ.) կանոնական օրինադրությունների մասին, որոնցից շատերը կիրառվել են և նույնիսկ տեղ են գտել Մ. Գոշի «Դատաստանագրքում»: Եզրակացությունը կրկին մեկն է՝ մինչև Մ. Գոշի «Դատաստանագիրքը» հայոց մեջ գոյություն չի ունեցել ներհասարակական կյանքի բոլոր ոլորտներին անդրադարձող օրենքների ժողովածու: Հայ ժողովրդի իրավական կացությունը թե պետականության գոյության և թե՛ օտար տիրապետությունների շրջանում եղել է ոչ բարվոք և անմխիթար: Այս վերջնական համոզմանն են մղում իրավունքի գարգացման ընթացքի ուսումնասիրությունները:

¹² Նույն տեղում, էջ 61: